

Հնդկաստանի Հանրապետության Արտաքին Գործերի Նախարարություն

Վարչապետի ելույթը 2020թ. Հնդկաստանի գաղափարների գագաթնաժողովում

22 հուլիսի, 2020 թ

Ողջույն,

Բիզնես առաջնորդներ,
Հարգելի հյուրեր,

Շնորհակալ եմ ԱՄՆ-Հնդկաստան բիզնես խորհրդին ինձ հրավիրելու «Հնդկաստանի գաղափարների գագաթնաժողով»-ում ելույթ ունենալու համար: Նաև շնորհավորում եմ USIBC- ին, ով այս տարի նշում է քառասունհինգ ամյակը: Անցած տասնամյակների ընթացքում USIBC- ն ավելի է մոտեցել հնդկական և ամերիկյան բիզնեսները: USIBC- ի այս տարվա գաղափարների գագաթնաժողովի ընտրությունը՝ «Ավելի լավ ապագա կառուցելը» նույնպես շատ կարևոր է:

Ընկերներ,

Բոլորս համաձայն ենք, որ աշխարհը կարիք ունի ավելի լավ ապագայի: Եվ մենք բոլորս պիտի հավաքականորեն ձևավորենք ապագան: Ես համոզված եմ, որ ապագայի նկատմամբ մեր մոտեցումը պետք է լինի առավելապես մարդակենտրոն: Մեր աճի օրակարգի հիմքում պիտի լինեն աղքատները և խոցելի մարդիկ: «Հեշտ ապրելը» նույնքան կարևոր է, որքան «հեշտ բիզնեսը»:

Ընկերներ,

Վերջին փորձը մեզ սովորեցրել է, որ համաշխարհային տնտեսությունը չափազանց կենտրոնացած է արդյունավետության և օպտիմիզացիայի վրա: Արդյունավետությունը լավ բան է: Սակայն, մյուս կողմից, մենք մոռացանք կենտրոնանալ հավասարապես կարևոր մի բանի վրա: Այն է՝ ճկունություն արտաքին ցնցումների դեմ: Համաշխարհային համաճարակ պահանջվեց՝ հիշեցնելու համար, թե որքան կարևոր է ճկունությունը:

Ընկերներ,

Համաշխարհային տնտեսական ճկունությանը կարելի է հասնել ներքին ուժեղ տնտեսական կարողությունների միջոցով: Սա նշանակում է՝ բարելավել ներքին կարողությունները՝ արտադրության, ֆինանսական համակարգի առողջության վերականգնման և միջազգային առևտրի դիվերսիֆիկացիայի համար:

Ընկերներ,

Հնդկաստանը նպաստում է բարեկեցիկ և ճկուն աշխարհին՝ «Ատմանիրբհար Բհարաթ» հնչեղ կոչով: Դրա համար մենք ակնկալում ենք ձեր գործընկերությանը:

Ընկերներ,

Այսօր Հնդկաստանի նկատմամբ կա զլոբալ լավատեսություն, քանի որ Հնդկաստանը առաջարկում է կատարյալ համադրություն՝ բաց լինելու, հնարավորությունների և տարբերակների: Թույլ տվեք մանրամասն ներկայացնել: Հնդկաստանը տոնում է մարդկանց և կառավարման մեջ բաց լինելը: Բաց միտքը ստեղծում է բաց շուկաներ: Բաց շուկաները հանգեցնում են ավելի մեծ բարեկեցության: Սրանք սկզբունքներ են, որոնց շուրջ համաձայն են և Հնդկաստանը, և ԱՄՆ-ը:

Ընկերներ,

Վերջին վեց տարիների ընթացքում մենք բազմաթիվ ջանքեր ենք գործադրել մեր տնտեսությունը ուղղորդելու ավելի բաց և բարեփոխված ուղղությամբ: Բարեփոխումները ապահովել են «մրցունակության» բարձրացում, «թափանցիկություն», ընդլայնված «թվայնացում», ավելի մեծ՝ «նորարարություն» և ավելի լին՝ «քաղաքականության կայունություն»:

Ընկերներ,

Հնդկաստանը ի հայտ է գալիս որպես հնարավորությունների երկիր: Թույլ տվեք ձեզ տալ տեխնոլոգիական ոլորտի մեկ օրինակ: Վերջերս մի հետաքրքիր զեկույց հայտնվեց Հնդկաստանում: Առաջին անգամ նշվեց, որ ավելի շատ գյուղական համայնքներում կան ինտերնետ օգտագործողներ, քան նույնիսկ քաղաքային համայնքում: Պատկերացրեք մասշտաբը: Այժմ Հնդկաստանում կա մոտ կես միլիարդ ակտիվ ինտերնետ օգտագործող: Կես միլիարդ միացված մարդիկ: Սա ձեզ համար հսկայական է թվում: Պահեք ձեր շունչը: Քանի որ կան ևս ավելի քան կես միլիարդ մարդ, ովքեր պատրաստվում են կապ ունենալ: Տեխնոլոգիայի հնարավորությունները ներառում են նաև հնարավորություններ 5G սահմանային տեխնոլոգիաներում, մեծ տվյալների վերլուծություն, քվանտային հաշվարկ, բլոկչեյն և իրերի համացանցը:

Ընկերներ,

Հնդկաստանում ներդրումներ կատարելու լայն տարբերակներ կան: Հնդկաստանը հրավիրում է ձեզ ներդրումներ կատարել մեր ֆերմերների քրտնաջան աշխատանքի մեջ: Վերջերս Հնդկաստանը պատմական բարեփոխումներ է իրականացրել՝ գյուղատնտեսության ոլորտում: Ներդրումային հնարավորություններ կան՝ գյուղատնտեսական միջոցները և սարքավորումներ, գյուղատնտեսության մատակարարումների ցանցի կառավարում, պատրաստի ուտելիքի, ձկնաբուծարան և օրգանական արտադրանքի ոլորտներում: Մինչև 2025 թվականը ակնկալվում է, որ Հնդկաստանի սննդի վերամշակման ոլորտը կկազմի ավելի քան կես տրիլիոն դոլար: Եկամուտների ավելի մեծ հոսքեր ապահովելու համար այժմ Հնդկաստանի գյուղատնտեսության ոլորտում ներդրումային հնարավորությունները շոշափելու լավագույն ժամանակն է:

Հնդկաստանը հրավիրում է ձեզ ներդրումներ կատարել առողջապահության ոլորտում: Հնդկաստանում առողջապահության ոլորտը յուրաքանչյուր տարի աճում է ավելի քան 22 տոկոսով: Մեր ընկերությունները նույնպես առաջադիմում են բժշկական-տեխնոլոգիաների արտադրության, հեռաբժշկության և ախտորոշման ոլորտում: Հնդկաստանը և ԱՄՆ-ն արդեն ստեղծել են ամուր գործընկերություն դեղագործության

ուղորտում: Ծավալի և արագության հասնելու համար այժմ լավագույն ժամանակն է ներդրումներն ընդլայնելու հնդկական առողջապահական ոլորտում:

Հնդկաստանը հրավիրում է ձեզ ներդրումներ կատարել էներգետիկ ոլորտում: Հնդկաստանը վերածվում է գազի վրա հիմնված տնտեսության, և ամերիկյան ընկերությունների համար մեծ ներդրումային հնարավորություններ կլինեն: Մաքուր էներգետիկայի ոլորտում նաև կան մեծ հնարավորություններ: Սա լավագույն ժամանակն է Հնդկաստանի էներգետիկայի ոլորտ մտնելու համար ձեր ներդրումների համար ավելի մեծ ներուժ ստեղծելու համար:

Հնդկաստանը հրավիրում է ձեզ ներդրումներ կատարել ենթակառուցվածքների ոլորտում: Մեր ժողովուրդը ակննատես է լինում մեր պատմության մեջ ենթակառուցվածքների ստեղծման ամենամեծ շարժիչ ուժին: Արի, գործընկեր դարձիր միլիոնավոր մարդկանց համար բնակարան կառուցելու կամ մեր ժողովրդի համար ճանապարհներ, մայրուղիներ և նավահանգիստներ կառուցելու գործում:

Քաղաքացիական ավիացիան մեծ ներուժի աճի ևս մեկ ոլորտ է: Առաջիկա 8 տարում ակնկալվում է, որ օդային ուղևորների թիվը ավելի քան կկրկնապատկվի: Հնդկական բարձրակարգ ավիաընկերությունները մտադիր են առաջիկա տասնամյակում ներառել ավելի քան հազար նոր ինքնաթիռ: Սա հսկայական հնարավորություն է ցանկացած ներդրողի համար, ով նախընտրում է Հնդկաստանում արտադրական ձեռնարկություններ հիմնել, որը կարող է հիմք դառնալ տարածաշրջանային շուկաներ մատակարարելու համար: Նմանատիպ հնարավորություն կա սպասարկման, նորոգման և շահագործման օբյեկտների ստեղծման համար: Ձեր ավիացիոն թիրախներին թռիչք տալու համար իդեալական ժամանակ է հիմա Հնդկական ավիացիոն ոլորտում ներդրումներ կատարելը:

Հնդկաստանը հրավիրում է ձեզ ներդրումներ կատարել պաշտպանության և տիեզերաբանության մեջ: Մենք բարձրացնում ենք ՕՈԻՆ-ի սահմանափակումը պաշտպանական ոլորտում ներդրումների համար մինչև 74 տոկոս: Հնդկաստանը երկու պաշտպանական միջանցք է ստեղծել՝ պաշտպանական սարքավորումների արտադրությունը և պլատֆորմները խրախուսելու համար: Մենք առաջարկում ենք հատուկ խթաններ մասնավոր և օտարերկրյա ներդրողների համար: Մի քանի շաբաթ առաջ մենք տիեզերաբանության ոլորտում նորարարական բարեփոխումներ համար թույլտվություններ սահմանեցինք: Եկեք, մաս դարձեք այս զարգացող ոլորտների:

Հնդկաստանը հրավիրում է ձեզ ներդրումներ կատարել ֆինանսների և ապահովագրության ոլորտում: Հնդկաստանը բարձրացրել է ՕՈԻՆԻ սահմանափակումները ապահովագրության ոլորտի ներդրումների համար մինչև 49 տոկոս: Այժմ 100 տոկոս ՕՈԻՆ թույլատրվում է ապահովագրական միջոտրոնների ներդրումների համար: Ապահովագրության շուկան Հնդկաստանում աճում է ավելի քան 12 տոկոս տոկոսադրույթով և մինչև 2025 թվականը ակնկալվում է, որ այն կաճի մինչև 250 միլիարդ դոլար: Մեր առողջության ապահովագրության սխեմայի՝ Այուշման Բհարաթի, բերքի ապահովագրության սխեմայի՝ վարչապետի Ֆասալ Բիմա Յոջնայի և սոցիալական ապահովության սխեմայի՝ Ջան Սուրակշայի հաջողությամբ կառավարությունը հիմք է դրել ապահովագրական արտադրանքների արագ յուրացման և ընդունման համար: Առողջության, գյուղատնտեսության, բիզնեսի և կյանքի ապահովագրության ոլորտում ապահովագրական ծածկույթի ավելացման մեծ հնարավորություններ կան:

Երկարաժամկետ և ապահովված եկամուտներ ստեղծելու համար հնդկական ապահովագրական հատվածը հենց հիմա ներդրումների լավագույն տարբերակներից մեկն է:

Ես ձեզ մի քանի տարբերակ տվեցի՝ նույնիսկ առանց խորհրդատվության վճարի:

Ընկերներ,

Երբ շուկաները բաց են, երբ հնարավորությունը մեծ է, և ընտրությունը շատ է, մի՞թե լավատեսությունը կարող է հետ մնալ: Կարող եք տեսնել լավատեսությունը, երբ Հնդկաստանը բարձրանում է բիզնեսի հիմնական վարկանիշներում, մասնավորապես Համաշխարհային բանկի բիզնեսի կատարման դյուրինության վարկանիշում:

Ներդրումները վստահության լավագույն դրսևորումն են: Ամեն տարի ՕՈԻՆ-ում հասնում ենք ռեկորդային բարձր մակարդակի: Յուրաքանչյուր տարի այն զգալիորեն ավելի բարձր է, քան նախորդ տարին: Հնդկաստանում 2019-20թթ-ի ՕՈԻՆ մուտքերը կազմել են 74 միլիարդ դոլար: Դա 20 տոկոսով բարձր է նախորդ տարվանից: USIBC ընկերները հայտնում են, որ ԱՄՆ-ից «երաշխյավորված ներդրումներն» արդեն անցել է 40 միլիարդ դոլարը: Տեսեք նաև, թե ինչ է պատահում նույնիսկ շարունակվող համաճարակի ընթացքում: COVID- ի կեսին, Հնդկաստանը ներգրավեց ավելի քան 20 միլիարդ դոլար արժողությամբ արտաքին ներդրումներ՝ 2020 թվականի ապրիլ-հուլիս ամիսների ընթացքում:

Մակայն Հնդկաստանը շատ ավելի շատ հնարավորություններ է առաջարկում: Մենք ունենք այն, ինչ անհրաժեշտ է համաշխարհային տնտեսական վերականգնումն ապահովելու համար:

Ընկերներ,

Հնդկաստանի վերելքը նշանակում է՝ առևտրի հնարավորությունների բարձրացում մի երկրի հետ, որին կարող եք վստահել: Գոբալ ինտեգրման աճ՝ ավելացող ազատականությամբ: ձեր մրցունակության բարձրացումը՝ շուկայի մատչելիության բարձրացման միջոցով, որն առաջարկում է մեծ ծավալներ: Եվ ձեր ներդրումների եկամտի բարձրացումը՝ որակյալ մարդկային ռեսուրսների առկայությամբ:

Ընկերներ,

Այս տեսլականի համար Ամերիկայի Միացյալ Նահանգներից շատ ավելի լավ գործընկերներ կան: Հնդկաստանը և ԱՄՆ-ը երկու վառ ժողովրդավարություններ են, որոնք ունեն ընդհանուր արժեքներ: Մենք բնական գործընկերներ ենք: ԱՄՆ-Հնդկաստան բարեկամությունը նախկինում բազում բարձունքներ է նվաճել: Այժմ ժամանակն է, որ մեր գործընկերությունը կարևոր դեր խաղա համաճարակի ավարտից հետո աշխարհի արագ վերականգնման հարցում: Ամերիկացի ներդրողները հաճախ փնտրում են կատարյալ ժամանակներ՝ ոլորտ կամ երկիր մուտք գործելու համար: Նրանց համար ես կցանկանայի ասել՝ դեռ երբեք ավելի լավ ժամանակ չի եղել Հնդկաստանում ներդրումներ կատարելու համար:

Եվս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում USIBC- ի ղեկավարությանը՝
Հնդկաստան-ԱՄՆ տնտեսական գործընկերությունը առաջ տանելու իրենց
հանձնառության համար: Թող որ USIBC- ն շարունակի նոր բարձունքներ նվաճել:

Թող, որ Հնդկաստան-Ամերիկա բարեկամությունն էլ ավելի զարգանա:

Նամաստե,
Շնորհակալություն:

Նյու Դելի
22 հուլիսի, 2020
